Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված զեկույցի (2018թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 1

1. Մեթոդաբանությունը 2

1.1. Մեթոդաբանության փոփոխությունը 3

1.2. Գլոբալ մրցունակության ենթաինդեքսների նկարագրությունը 4

2. Հայաստանի գնահատականները 7

3. Միջազգային համադրումները 10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլոբալ մրցունակության զեկույցը հրապարակվում է Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից և հիմնական նպատակն է գնահատել երկրներում բարեկեցության բարձր մակարդակի ապահովման կարողությունները: Վերջինս գնահատելու համար զեկույցում ներառվում են ինչպես միկրոտնտեսական, այնպես էլ մակրոտնտեսական բաղադրիչներ, որոնք միասին արտացոլում են երկրի մրցունակության մակարդակը:

Գլոբալ մրցունակության 2018թ. զեկույցում[1] գնահատվել է 140 երկրի մրցունակության մակարդակը՝ արտացոլելով այդ երկրների արտադրողականության և բարեկեցության մանրամասն նկարագրությունը:

Մրցունակության գնահատման հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդկային զարգացման հիմնական շարժիչ ուժը և անհրաժեշտ պայմանը տնտեսական աճն է: Այն օգնում է բարձրացնել բնակչության եկամուտները, կրճատել աղքատությունը և բարելավել կյանքի որակը: Սակայն, որպեսզի տնտեսական աճը նպաստի այս նպատակների իրագործմանը, այն պետք է լինի կայուն և ներառական:

2018թ. մրցունակության գնահատման մեթոդաբանությունը վերանայվել է, ինչի արդյունքում փոխվել են ինչպես գնահատման սկզբունքները, այնպես էլ կիրառվող ցուցանիշները և դրանց համախմբման մեթոդները: Ըստ նոր մեթոդաբանությամբ հաշվարկված Գլոբալ մրցունակության զեկույցի արդյունքների՝ Հայաստանը բարելավել է իր դիրքը 2 հորիզոնականով՝ 140 երկրների շարքում զբաղեցնելով 70-րդ տեղը:

[1] http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf

1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գլոբալ մրցունակության ինդեքս 4.0-ը (այսուհետ՝ ԳՄԻ 4.0) հաշվարկվում է 98 ցուցանիշների հիման վրա, որոնցից 44-ը ստացվում են Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից իրականացվող հարցումների միջոցով, իսկ մնացած 54-ը հիմնված են փաստացի վիճակագրական տվյալների վրա: 98 ցուցանիշներից մեկ միասնական ինդեքս ստանալու համար պետք է հաշվարկվի դրանց միջին արժեքը: Սակայն, երբ ցուցանիշներն ունեն տարբեր չափման միավորներ, դա անել հնարավոր չէ: Այդ պատճառով յուրաքանչյուր ցուցանիշի արժեքը առանձին մեթոդաբանությամբ փոխակերպվում է 0-100 միավորի, որտեղ 0-ն վատագույն արդյունքն է, իսկ 100-ը՝ լավագույն: Այս քայլից հետո բոլոր ցուցանիշները, ըստ իրենց բնութագրման բնագավառի, ագրեգացվում են՝ խմբավորվելով նախ 12 ենթաինդեքսների, այնուհետև 1 ինդեքսի մեջ:

Աղյուսակ 1. ԳՄԻ 4.0-ի ենթաինդեքսները

Նպաստավոր միջավայր	Շուկաներ
Ինստիտուտներ	Ապրանքների շուկա
Ենթակառուցվածքներ	Աշխատանքի շուկա
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Ֆինանսական համակարգ
Մակրոտնտեսական կայունություն	Շուկայի մեծություն
Մարդկային կապիտալ	**Նորարարություններ**
Առողջապահություն	Գործարար ակտիվություն
Կրթություն	Նորարարության կարողություն

Յուրաքանչյուր ենթաինդեքս այդ բնագավառը բնութագրող ցուցանիշների պարզ միջին թվաբանականն է, իսկ ԳՄԱ 4.0-ը 12 ենթաինդեքսների միջին թվաբանական արժեքն է:

1.1. Մեթոդաբանության փոփոխությունը

Համաշխարհային տնտեսական համաժողովը 2018 թվականից Գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկման համար սկսել է կիրառել նոր մեթոդաբանություն, ինչը մատնանշելու համար ինդեքսը կոչվել է Գլոբալ մրցունակության ինդեքս 4.0 (այսուհետ՝ ԳՄԻ 4.0): Մեթոդաբանության փոփոխության անհրաժեշտությունը կապվում է վերջին տարիներին համաշխարհային տնտեսական զարգացումներով, մասնավորապես՝

- 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով արտադրողականության կտրուկ անկումը և դրա ունեցած երկարատև ազդեցությունը,
- 4-րդ արդյունաբերական հեղափոխության արդյունքները հաշվի առնելու անհրաժեշտությունը,
- նորարարությունների մեծացող դերը բիզնես մոդելների շահութաբերության և կենսունակության ապահովման գործում:

Նոր մեթոդաբանությամբ փոփոխվել են ինչպես ինդեքսի հաշվարկման համար օգտագործվող ցուցանիշները և սկզբունքները, այնպես էլ հաշվարկման մեթոդաբանությունը, ցուցանիշների ագրեգացման եղանակները և բացակայող տվյալների լրացման մոտեցումները:

Նոր մեթոդաբանության մշակման հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդկության զարգացման անհրաժեշտ պայմանը արտադրողականության աճն է, որը թույլ է տալիս ապահովել կայուն և երկարաժամկետ տնտեսական աճ: Հետևաբար, ԳՄԻ 4.0-ի շրջանակներում գնահատվում են այն բոլոր գործոնները, որոնք միասին պայմանավորում են երկրում արտադրողականության մակարդակը, որը դիտարկվում է որպես կյանքի որակի երկարաժամկետ բարելավման կարևորագույն շարժիչ ուժ:

Արտադրողականության վրա ազդող գործոնները՝ ցուցանիշները, խմբավորվում են 12 խմբերում, որոնք ներկայացման նպատակով բաժանվում են 4

մասի՝ *նպաստավոր միջավայր, մարդկային կապիտալ, շուկաներ և նորարարություններ*: Նախկինում ցուցանիշները նույնպես խմբավորվում էին 12 խմբերում, սակայն դրանց ներկայացման տրամաբանությունն այլ էր: Առաջին 4 խմբերը մրցունակության բազային անհրաժեշտ պայմաններն էին, որոնք ապահովում էին տնտեսության ռեսուրսների առկայությամբ պայմանավորված աճը: Այնուհետև 5-րդից 10-րդ խմբերը ներկայացվում էին որպես տնտեսական աճի արդյունավետությունը բարձրացնող գործոններ, իսկ 11-րդ և 12-րդ խմբերի արժեքները ցույց էին տալիս նորարարություններով պայմանավորված մրցունակության աճը: Ըստ այս մոտեցման՝ տարբեր երկրների համար, կախված զարգացածության մակարդակից, կիրառվում էին ցուցանիշների ագրեգացման տարբեր կշիռներ: Մինչդեռ ԳՄԻ 4.0-ի հաշվարկման համար ցուցանիշներն ագրեգացվում են նույն կշիռներով բոլոր երկրների համար:

1.2. Գլոբալ մրցունակության ենթաինդեքսների նկարագրությունը

1. **Ինստիտուտները** պայմանավորում են այն միջավայրը, որտեղ անհատները և կազմակերպությունները ձեռնարկում և իրականացնում են իրենց գործունեությունը: Ինստիտուտները ազդում են արտադրողականության վրա՝ հիմնականում գործունեության խթանների ստեղծման և անորոշությունների կրճատման միջոցով: Այս ենթաինդեքսի շրջանակներում հաշվի են առնվում անվտանգությունը, սեփականության իրավունքը, սոցիալական կապիտալը, թափանցիկությունը, էթիկան, հանրային հատվածի արդյունավետությունը և կորպորատիվ կառավարումը:

2. Զարգացած **ենթակառուցվածքները** նվազեցնում են փոխադրման և գործառնական ծախսերը, հեշտացնում են բնակչության և արտադրական ռեսուրսների փոխադրումը ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս: Դրանք նաև հասանելիություն են ապահովում էներգետիկ և ջրային ռեսուրսներին, որոնք զարգացած աշխարհում գործարար ակտիվության անհրաժեշտ պայմաններն են: Այս ենթաինդեքսը ներառում է տրանսպորտային ցանցի (ներառյալ

ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային և օդային) երկարությունը և որակը, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների հասանելիությունը և որակը:

3. **Տեղեկատվական տեխնոլոգիաների** ենթաինդեքսը չափում է առանձին ինֆորմացիոն և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների տարածվածության աստիճանը, որի միջոցով հնարավոր է բարձրացնել տեղեկատվության և նոր մտքերի փոխանակման արագությունը, կրճատել գործառնական ծախսերը:

4. **Մակրոտնտեսական կայունության** ենթաինդեքսի նպատակն է չափել այն գործոնների ազդեցությունը, որոնք նվազեցնում են երկրի մրցունակությունը՝ ներդրումների վրա բացասաբար ազդեցություն ունենալով: Այն ներառում է գնաճի մակարդակը և հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը: Մակրոտնտեսական կայունության ապահովումը նվազեցնում է անորոշությունը, գործարարների համար ստեղծում է կանխատեսելի միջավայր և մեծացնում է վստահությունը, որոնք բոլորը միասին դրական են ազդում արտադրողականության վրա: Բացի դրանից, ժամանակակից պայմաններում, երբ աշխարհում տնտեսությունների փոխկապակցվածությունը աճում է, մակրոտնտեսական կայունության պակասը կարող է հանգեցնել կապիտալի արտահոսքի՝ առաջացնելով բացասական տնտեսական հետևանքներ:

5. **Առողջապահության** ներառումը գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկում բացատրվում է նրանով, որ առողջ բնակչությունն օժտված է ավելի շատ ֆիզիկական և մտավոր կարողություններով, ավելի արտադրողական է և նորարար: Այս ենթաինդեքսը հաշվարկվում է առողջ կյանքի տևողության ցուցանիշի[2] հիման վրա:

6. **Կրթության** ենթաինդեքսը հաշվարկվում է աշխատուժի հմտությունների և կարողությունների ընդհանուր մակարդակի, ինչպես նաև կրթության տևողության ու որակի հիման վրա: Կրթության որակի չափանիշները աստիճանաբար կատարելագործվում են, հետևաբար դրա գնահատման մեթոդները նույնպես պետք է վերանայվեն: Տվյալ զեկույցում այն գնահատելու համար կիրառվում է էլեկտրոնային

[2] Տարիների միջին քանակն է, որ մարդը կարող է ապրել ծնվելուց հետո՝ լինելով առողջ:

գրականության զարգացածությունը, միջանձնային ունակությունները և ստեղծագործաբար ու քննադատաբար մտածելու ունակությունը: Որակյալ կրթությունը բարձրացնում է աշխատուժի ունակություններն ու հմտությունները, որը նպաստում է արտադրողականության բարձրացմանը:

7. **Ապրանքների շուկայի** ենթաինդեքսը ցույց է տալիս, թե պետությունը որքանով է կարողանում հավասար պայմաններ ապահովել բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար: Դա չափվում է ինչպես շուկայում գերիշխող դիրքերի առկայության, այնպես էլ օտարերկրյա ընկերությունների մուտքի ազատության և շուկայական հարաբերությունների խեղաթյուրման աստիճանով:

8. Արդյունավետորեն գործող **աշխատանքի շուկան** մեծացնում է արտադրողականությունը, քանի որ հնարավորություն է տալիս աշխատողներին հնարավորինս արագ գտնել իրենց համապատասխանող աշխատանք: Սա թույլ է տալիս երկրի տնտեսությանը լինել ավելի դիմացկուն ցնցումների նկատմամբ, քանի որ աշխատողներն ավելի շուտ են հարմարվում փոփոխվող պայմաններին: Զեկույցում աշխատանքի շուկայի արդյունավետությունը չափվում է ճկունությամբ, այսինքն՝ թե որքան արագ աշխատողները կարող են վերապատրաստվել և կատարել այլ աշխատանք:

9. **Ֆինանսական համակարգի** ենթաինդեքսի միջոցով չափվում է վարկերի, կապիտալի, ապահովագրության և այլ ֆինանսական գործիքների հասանելիությունը և ֆինանսական համակարգի կայունությունը:

10. **Շուկայի մեծությունը** ներքին և արտաքին այն շուկաների տարողունակությունն է, որոնք հասանելի են ներքին կազմակերպություններին: Տարողունակությունը չափելու համար օգտագործվում են համախառն սպառումը, ներդրումները և արտահանումը:

11. **Գործարար ակտիվությունը** մասնավոր հատվածի կարողությունն է՝ ստեղծել և ներդնել նոր տեխնոլոգիաներ, աշխատանքի կազմակերպման նոր մեթոդներ, նոր բիզնես մոդելներ և կառավարման կանոններ, որոնք թույլ են տալիս կազմակերպություններին ունենալ շուկա մուտքի և ելքի ազատություն:

12. **Նորարարության կարողության** ենթաինդեքսի միջոցով չափվում է իրականացվող հետազոտությունների քանակը և որակը, ինչպես նաև նոր ապրանքներ և ծառայություններ ստեղծելու կարողությունը:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Գլոբալ մրցունակության ինդեքսը ՀՀ տնտեսության համար 2018թ. կազմել է 59.86 միավոր, որը 2017թ. նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 1.01 միավորով: Դրա արդյունքում Հայաստանը բարելավել է իր դիրքը 2 հորիզոնականով՝ բարձրանալով 70-րդ տեղը: Մրցունակության բոլոր ենթաինդեքսները, բացառությամբ «մակրոտնտեսական կայունության» ենթաինդեքսի, բարելավել են իրենց արժեքները: Առավել մեծ չափով են աճել «տեղեկատվական տեխնոլոգիաների», «շուկայական մրցակցության» և «նորարարական կարողությունների» ենթաինդեքսները, որոնց արժեքները համապատասխանաբար աճել են 4.31, 2.93 և 1.67 միավորներով:

Աղյուսակ 2. Գլոբալ մրցունակության ՀՀ ինդեքսը և 140 երկրների շարքում զբաղեցրած դիրքը 2017-2018թթ. (համաձայն ԳՄԻ 4.0-ի)

Ցուցանիշը	Դիրք		Ինդեքսը		2018թ. 2017թ.-ի նկատմամբ	
	2017	2018	2017	2018	Դիրքի բաերլավումը	Ինդեքսի փոփոխությունը
Գլոբալ մրցունակության ինդեքս 4.0	72	70	58.85	59.86	2	1.01
1. Ինստիտուտներ	67	67	52.88	54.0	0	1.12
2. Ենթակառուցվածքներ	74	74	65.92	66.3	0	0.35
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ	59	56	54.88	59.2	3	4.31
4. Մակրոտնտեսական կայունություն	71	89	74.57	72.4	-18	-2.16
5. Առողջապահություն	63	61	81.76	82.7	2	0.96
6. Կրթություն	53	55	67.19	67.6	-2	0.37
7. Ապրանքների շուկա	52	39	58.25	61.2	13	2.93
8. Աշխատանքի շուկա	31	33	64.91	65.0	-2	0.09
9. Ֆինանսական համակարգ	89	87	53.08	54.2	2	1.13
10. Շուկայի մեծություն	118	118	35.59	36.7	0	1.15
11. Գործարար ակտիվություն	56	62	60.00	60.2	-6	0.21
12. Նորարարության կարողություններ	64	60	37.18	38.9	4	1.67

2018թ. նախորդ տարվա նկատմամբ գնահատված երկրների շարքում զբաղեցրած հորիզոնականով Հայաստանն իր դիրքն առավելագույնը բարելավել է «ապրանքների շուկայի» ենթաինդեքսով՝ 13 հորիզոնականով: Որոշ ենթաինդեքսների մասով («կրթություն», «աշխատանքի շուկա» և «գործարար

ակտիվություն») Հայաստանի մրցունակությունն աճել է՝ միավորը բարձրացել է, սակայն զբաղեցրած դիրքը վատթարացել է, ինչը պայմանավորված է նրանով, որ այլ երկրներում նշված ցուցանիշներն ավելի շատ են բարելավվել:

2018թ. նախորդ տարվա նկատմամբ միակ վատթարացած ենթաինդեքսը «մակրոտնտեսական կայունությունն» է, որի արժեքը նվազել է 2.16 տոկոսով, իսկ երկրի զբաղեցրած դիրքը վատթարացել է 18 հորիզոնականով՝ հասնելով 89-ի: Հարկ է նշել, որ նախորդ մեթոդաբանության համեմատ ԳՄԻ 4.0-ում «մակրոտնտեսական կայունության» ենթաինդեքսը հաշվարկվում է ավելի քիչ ցուցանիշների՝ միայն գնաճի և պետական պարտքի միջոցով[3]: Գնաճը չափվում է սպառողական գների ինդեքսի միջին տարեկան տոկոսային փոփոխությամբ և կայուն մակարդակ է համարվում **0.5%-ից 4.0%** միջակայքը: Այն երկրները, որոնց գնաճը գտնվում է այդ միջակայքում, ստանում են առավելագույն 100 միավորը: Եթե փաստացի գնաճը դուրս է այդ միջակայքից, ապա հանվում են միավորներ՝ կայուն մակարդակից փաստացի գնաճի հեռավորության չափով:

Գծապատկեր 1. Մակրոտնտեսական կայունության ենթաինդեքսի, դրա բաղադրիչ ցուցանիշների արժեքները և ՀՀ զբաղեցրած դիրքը 140 երկրների շարքում:



[3] Նախկինում «մակրոտնտեսական կայունության» ենթաինդեքսը հաշվարկվում էր՝ կիրառելով պետական բյուջեի պակասուրդը, համախառն խնայողությունները, գնաճը, պետական պարտքը և երկրի վարկանիշը:

Հայաստանի համար 2018թ. ԳՄԻ 4.0-ի «մակրոտնտեսական կայունության» ենթաինդեքսի հաշվարկման համար որպես գնաճ ընդունվել է 2016-2017թթ. միջին գնաճը, որը կազմել է -0.2 տոկոս, ինչի արդյունքում Հայաստանը ստացել է 100-ից ցածր՝ 97.9 միավոր և այս ցուցանիշով զբաղեցրել է 94-րդ տեղը: Նախորդ տարվա՝ 2017թ. ԳՄԻ 4.0-ի հաշվարկման համար հիմք է ծառայել 2015-2016թթ. միջին գնաճը, որը եղել է 1.16 տոկոս՝ գտնվելով 0.5%-ից 4.0% կայունության միջակայքում: Հետևաբար, 2017թ. Հայաստանը այս ցուցանիշով ստացել է 100 միավոր՝ զբաղեցնելով առաջին հորիզոնականը (մի շարք այլ երկրների հետ միասին):

Ինչ վերաբերում է պետական պարտքին, ապա այս բաղադրիչի հաշվարկման համար կիրառվում են հետևյալ 4 ցուցանիշները՝

1. պարտք/ՀՆԱ հարաբերությունը, որը ցույց է տալիս պարտքի մեծությունը,
2. երկրի վարկանիշը, որն օգնում է չափել ներդրողների վստահությունը երկրի նկատմամբ,
3. երկրի զարգացման աստիճանը՝ հիմնվելով Արժույթի միջազգային հիմնադրամի դասակարգման («զարգացած» կամ «զարգացող») վրա,
4. պարտքի սպասվող փոփոխությունը, որն արտացոլում է պարտքի աճի տեմպը:

Առաջին, երկրորդ և երրորդ ցուցանիշները 2017 և 2018 թվականների ԳՄԻ 4.0-ի գնահատման համար չեն փոփոխվել[4]: Աճել է միայն պարտքի սպասվող փոփոխությունը, որն էլ բացասական ազդեցություն է ունեցել «մակրոտնտեսական կայունության» ենթաինդեքսի վրա:

[4] Պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը, բնականաբար, փոխվել է՝ 2016թ. 56.7%-ից 2017-ին դառնալով 58.9%, սակայն ԳՄԻ 4.0-ի գնահատման համար կիրառվում են միջակայքեր, օրինակ 40-50%, 50-60%, որոնց միջև գտնվող փաստացի պարտքի ցուցանիշը ստանում է միևնույն գնահատականը: Այսինքն՝ 56.7% և 58.9% ցուցանիշները, գտնվելով 50-60% միջակայքում, չեն ազդում ԳՄԻ 4.0-ի արժեքի վրա:

Գծապատկեր 2. ՀՀ մրցունակության ինդեքսի շարժընթացը 2007-2017թթ.[5]



ՀՀ տնտեսության մրցունակությունը վերջին տարիներին աճել է՝ միաժամանակ բարելավելով ՀՀ դիրքերը ԳՄԻ սանդղակում: 2014 թվականի համեմատ Հայաստանն արձանագրել է մրցունակության դիրքի բարելավում 15 հորիզոնականով՝ 85-րդ տեղից բարձրանալով 70-րդ հորիզոնական, իսկ 2007-ի նկատմամբ ՀՀ դիրքը բարելավվել է 23 հորիզոնականով:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐԸ

ԳՄԻ 4.0-ի արդյունքներով 2018 թվականին աշխարհում ամենամրցունակ երկիրն է համարվել ԱՄՆ-ը՝ 85.6 միավորով: ԳՄԻ 4.0-ի բոլոր բաղադրիչներով ԱՄՆ-ի տնտեսությունը ստացել է բարձր միավորներ, սակայն ընդհանուր առմամբ դեռևս հետ է 100 միավորից, ինչը նշանակում է, որ նույնիսկ ամենամրցունակ տնտեսությունը բարելավվելու տեղ ունի:

[5] Մինչև 2017թ. գծապատկերում արտացոլված են նախկին մեթոդաբանությամբ հաշվարկված ինդեքսները: 2018թ. ԳՄԻ միավորը ներկայացված չէ գծապատկերում, քանի որ մեթոդաբանության փոփոխության պատճառով այն համադրելի չէ նախորդ տարիների ցուցանիշների հետ:

Երկրորդ հորիզոնականում է Սինգապուրը՝ 83.5 միավորով, իսկ լավագույն եռյակը եզրափակում է Գերմանիան՝ 82.8 միավորով: 4-րդ և 5-րդ տեղերում են Շվեյցարիան և Ճապոնիան: Առավել ոչ մրցունակ երկիրը Չադն է՝ 35.5 միավորով:

Չնայած վերջին տարիների դրական շարժընթացին՝ Հայաստանը դեռևս հետ է մնում տարածաշրջանի մի շարք երկրներից: Մասնավորապես՝ Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան ըստ ԳՄԻ 4.0-ի համարվում են ավելի մրցունակ և 2018թ. զբաղեցրել են համապատասխանաբար 66-րդ, 69-րդ և 61-րդ հորիզոնականները: Հարևան երկրների շարքում Հայաստանը առաջ է միայն Իրանից՝ 19 հորիզոնականով:

Գծապատկեր 3. Գլոբալ մրցունակության ինդեքս 4.0-ի տարածաշրջանային միջին արժեքները և Հայաստանի գնահատականը 2018թ.



ԳՄԻ 4.0-ի համաշխարհային միջին արժեքը 60.0 միավորն է: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների մրցունակության միջին միավորը կազմել է 70.8, ընդ որում այստեղ ներառված են 10 ամենամրցունակ երկրներից 7-ը: Մնացած 3 երկրները ներառող Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջին միավորը ավելի բարձր է՝ 72.6 միավոր: Աֆրիկա մայրցամաքի երկրների մրցունակության միջին ինդեքսը կազմել է 42.5:

Հայաստանի մրցունակությունը շատ մոտ է համաշխարհային միջին մակարդակին՝ գերազանցում է Աֆրիկայի միջին ցուցանիշը, սակայն զգալիորեն հետ է մյուս տարածաշրջանների՝ Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Արևելյան Ասիայի և Օվկիանիայի միջին մակարդակներից:

Գծապատկեր 4. Գլոբալ մրցունակության ինդեքս 4.0-ի արդյունքներով Հայաստանի և այլ երկրների զբաղեցրած հորիզոնականները 140 երկրների շարքում 2017-2018թթ.



ԳՄԻ 4.0-ի ենթաինդեքսների շարքում Հայաստանն ամենաբարձր հորիզոնականում է գտնվում «աշխատանքի շուկայի» ենթաինդեքսի ցուցանիշով՝ գրավելով 33-րդ հորիզոնականը: ՀՀ աշխատանքի շուկան ավելի մրցունակ է, քան Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, ինչպես նաև Ռուսաստանի շուկաները, սակայն 2 հորիզոնականով հետ է մնում Վրաստանից: ՀՀ աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշներից վատագույն դիրքում է աշխատուժի շարժունակությունը երկրի ներսում՝ զբաղեցնում է 110-րդ հորիզոնականը:

Հայաստանի մրցունակության վրա բացասաբար ազդող ենթաինդեքսն է «շուկայի մեծության» ենթաինդեքսը, որի գծով 140 երկրների շարքում Հայաստանը 2017 և 2018 թվականներին գրավել է 118-րդ տեղը: Սա 12 ենթաինդեքսների գծով Հայաստանի զբաղեցրած ամենացածր հորիզոնականն է:

Ընտրված երկրների շարքում Հայաստանը բարձր դիրք ունի «առողջապահության» ենթաինդեքսի ցուցանիշով՝ զբաղեցնում է 61-րդ տեղը և առաջ անցնում հարևան երկրներից, բացառությամբ Թուրքիայի:

Առանձին ենթաինդեքսների գծով մի շարք երկրների հետ համեմատությունները տեղ են գտել հավելվածում:

Հավելված

Գլոբալ մրցունակության ինդեքս 4.0-ի ենթաինդեքսներով Հայաստանի և այլ երկրների զբաղեցրած դիրքերը 140 երկրների շարքում 2017-2018թթ.

1. Ինստիտուտներ



2. Ենթակառուցվածքներ



3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ



4. Մակրոտնտեսական կայունություն



5. Առողջապահություն



6. Կրթություն



7. Ապրանքների շուկա



8. Աշխատանքի շուկա



9. Ֆինանսական համակարգ



10. Շուկայի մեծություն



11. Գործարար ակտիվություն



12. Նորարարության կարողություն



«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*